

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

ԲԱՐԿՈՒԹԵԱՆ ՎՆԱՍՆԵՐԸ

Սիրելի եղբայրներ, ամեն մարդ թող արագ ըլլայ լսելու եւ ծանր՝ խօսելու եւ բարկանալու մէջ, որովհետեւ մարդուն բարկութիւնը Աստուծոյ արդարութիւնը կը հեռացնէ: **Յակ. Ա. 16-20**

Սիրելիներ, քանզի ետք բարկութեան չարիքները եւ մանաւանդ գիտնալէ ետք, թէ ինչպիսի բարիքներէ պիտի զրկուիմք երբ Աստուծոյ արդարութենէն բաժնուիմք, գոյշ ըլլանք մեր անձերուն նկատմամբ ու հեռանանք բարկութենէն եւ անոր չարութենէն, ինչպէս կատարի գագանէ մը: Զըլլայ թէ իժի պէս մեր մէջ բոյն դնելով վնասէ մեր հոգիներուն, իսկ թէ մեր կրօնը եւ հեծեալը գետին ձգէ: Եթէ Աստուծոյ այլ դատաստանները վրէժխրնդրութեան բարկացողներուն չէին, գէթ մարդոցմէ պէտք էր շառագունիլ ու դողալ, եւ ոչ թէ գագանի նման անընտելի եւ վայրենի՝ բոլոր տեսնողներուն ծաղրանքի առարկայ ըլլալ: Օձերու եւ կարիներու բնութիւնն է միշտ գագանութեան մէջ մնալ, որոնք որոնք մօտեան կը գարնեն, կը վիրաւորեն եւ այդ պատճառաւ բոլորին ատելի են եւ ամէն ոք իր ձեռքը կը գիւնէ գանոնք սպաննելու: Անոնց մի նմանիք դուն, որ բանաւոր եւ իմաստուն ես: Անոնք բնութեամբ ունին գագանութիւն, այդպէս ստեղծուած ըլլալով Արարիչէն, սակայն դուն նոյնպէս չստեղծուեցար, այլ՝ իմաստուն, հեզ եւ հանդարտ: Ինչո՞ւ համար բնութենէն դուրս գալով կամովին կը նմանիս անոնց գագանութեան:

ՄԵՍՍԻԱՍԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՄԵԾ ԳՎԱՌՅ ԿԻՐԱԿԻՆԵՐԸ ԱՐՏԱՔՍՄԱՆ ԿԻՐԱԿԻ

Մեծ պահոց կիրակիները կը յուշեն մեզի, թէ կը գտնուինք զոջումի եւ ապաշխարութեան շրջանի մը մէջ:

Իրաքանչիւր կիրակի անուանում մը ունի: Իրաքանչիւրը Խորհուրդի մը ընդմէջէն կը փորձէ մեզ վերականգնել մեր հոգեւոր աշխարհին մէջ:

Մենք տեսանք, թէ ինչպէ՛ս Բուն Բարեկենդանը՝ Մեծ պահքի Ա. Կիրակի օրը կը յիշատակէ նախամարդուն դրախտային կեանքը:

Ահաւասիկ, երկրորդ Կիրակի կու գայ յիշեցնելու մեզի նախամարդուն անկումը՝ պարտազանց մարդուն արտաքսումը դրախտային կեանքէն:

Եւ այս խորհուրդը Շնորհալի Հայրապետ հետեւեալ բառերով կը ներկայացնէ օրուան շարականներուն մէջ.- «Մեր նախահօր դրախտային կեանքէն զրկուած ըլլալու տրամադրութեան հետ, մենք եւս ընդունինք ապաշխարութեան տրամաբիւնը, որպէսզի Քրիստոսի յարութեամբ արժանի դառնանք եկեղեցոյ դրախտային կեանքէն ներս մտնելու»:

Բնականաբար եռամեծար Ա. Հայրապետին ակնարկութիւնը՝ Մեծ Դիւանքի ընթացքը ներկայացնել է, ուր զոջումի եւ ապաշխարութեան ճանապարհով՝ վերականգնման հնարաւորութիւն կը տրուի մարդուն:



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՍՐԵՂ ԽՄ ՌՅԲԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս, 119.105)

ԺԶ. ՏԱՐԻ **ԿԻՐԱԿԻ, 26 ՓԵՏՐՈՒԱՐ 2023** ԹԻՒ 9

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Եւ. 33.2-22: Դձ. 12.1-13.10: Մատթէոս 5.17-48

Ա. ԲԱՌԱՍՆՈՐԴԱՑ: ԱՐՏԱՔՍՄԱՆ ԿԻՐԱԿԻ

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 5. 17-48

Մի՛ կարծէք, թէ եկայ Մովսէսի Օրէնքը կամ մարգարէներու ուսուցումները ջնջելու: Չեկայ ջնջելու, այլ ամբողջացնելու: Հաստատ գիտցէ՛ք, որ բոլոր Օրէնքն ու մարգարէութիւնը կէտ առ կէտ պիտի իրականանան առանց բառ մը իսկ դուրս ձգելու, մինչեւ գայ այն օրը, երբ այս երկիւնքն ու երկիրը պիտի անցնին: Ով որ ամենափոքր պատուիրանն իսկ զանց ընէ եւ ուրիշներուն ալ պատուիրէ նոյնը կատարել, երկիւնքի արքայութեան մէջ յետինը պիտի նկատուի: Իսկ ով, որ գործադրէ պատուիրանները եւ նոյնը ուսուցանէ, մեծ պիտի ըլլայ երկիւնքի արքայութեան մէջ: Կ'ըսեմ ձեզի, երկիւնքի արքայութենէն ներս կրնաք մտնել այն ատեն միայն, երբ Աստուծոյ պատուիրաններուն նկատմամբ իրենց հաւատարմութիւնը փարիսեցիներուն եւ օրէնքի ուսուցիչներուն ունեցած հաւատարմութենէն աւելի ըլլայ:

Լսեր էք, որ անցեալին ըսուած է. «Մի՛ սպաններ, որովհետեւ ան որ կը սպաննէ, պիտի դատապարտուի»: Իսկ ես կ'ըսեմ ձեզի. Ով որ առանց պատճառի իր եղբոր դէմ բարկանայ, պիտի դատապարտուի: Ով, որ իր եղբայրը յիմար կոչէ, դարձեալ ատեան պիտի բերուի, կամ ան, որ իր եղբայրը անմիտ կոչէ, Գեհենի կրակին պիտի դատապարտուի: Եթէ գոհի սեղանին վրայ ընծադ Աստուծոյ մատուցանելու ատեն յիշես, որ եղբայրդ վշտացած է քեզմէ, ձգէ՛ ընծադ սեղանին առջեւ, գնա՛ նախ հաշտուէ՛ եղբորդ հետ եւ ապա եկու՛ր եւ ընծադ Աստուծոյ մատուցանէ՛:

Երբ մէկը խնդիր ունի քեզի հետ եւ դատի կը կանչէ քեզ, սկիզբէն համաձայնութեան եկուր անոր հետ, երբ տակաւին ժամանակ ունիս, այլապէս՝ քեզ դատաւորին կը յանձնէ, դատաւորն ալ՝ ոստիկանին եւ բանտ կը նետուիս: Վստահ եղի՛ր, թէ բանտէն պիտի չելլես մինչեւ որ տուգանքիդ վերջին դահեկանը չվճարես:

Լսեր էք, որ ըսուած է. «Մի՛ շնար»: Իսկ ես կ'ըսեմ ձեզի, թէ ով, որ ցանկութեամբ նայի ուրեք կնոջ՝ արդէն իսկ իր սիրտին մէջ շնութիւն ըրած կ'ըլլայ անոր հետ: Եթէ աջ աչքդ քեզ կը գայթակղեցնէ, հանէ՛ եւ նետէ՛ գայն, որովհետեւ նախընտրելի է, որ անդամներդ մէկը կորսնցնես քան թէ ամբողջ մարմնով դժոխք նետուիս: Եթէ աջ ձեռքդ քեզ կը գայթակղեցնէ, կտրէ՛ ու նետէ՛ գայն, որովհետեւ նախընտրելի է, որ անդամներդ մէկը կորսնցնես, քան թէ ամբողջ մարմնով դժոխք նետուիս:

ՃՐԱԳ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ Jerak ճրագ թերթ
ՃՐԱԳ-ը կը պատրաստէ՝ Սարգիս Ա. Քինյ. Սարգիսեան

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ԹԵՈՂՈՐՈՍ ԶՕՐԱՎԱՐ



Ամասիոյ Սարու գիւղէն՝ բարեպաշտ ծնողքի զաւակ: Կը պատկանէր Մաքսիմիանոսի օրով զինուորներու այն կարգին, որ կը կոչուէր դիոն, այսինքն «նորամուտ»: Ճամբորդած միջոցին օր մը հանդիպեցաւ ահագին վիշապի մը, զոր սպաննեց նիզակով եւ հաւատքով: Յետոյ, երբ յայտնուեցաւ քրիստոնէութիւնը, քննութեան կանչուեցաւ, համարձակ խոստովանեցաւ ստուգութիւնը, եւ բացի այդ, գիշեր ատեն կրակի տուաւ մեծագոյն աստուածունի Ռէայի մեհեանը: Այս պատճառաւ սաստիկ քանակոծուելէ վերջ բանտ նետուեցաւ, ուր երկնային տեսիլքի մխիթարութիւնն ունեցաւ: Կրկին հարցաքննութենէ վերջ այրեցին սուրբը 306-ին: Նշխարները ամփոփեց Եւսեբիա անունով տիկին մը իր տան մէջ, որ յետոյ եկեղեցիի վերածուեցաւ:

Հայ եկեղեցոյ տօնացոյցին համաձայն Թեոդորոս Զօրավարին տօնը կը զուգադիպի Շաբաթ 25 Փետրուար, 2023-ին:

ՀԱՐՅՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ ԲԱԺԻՆ

Պահեցողութիւնը պարտաւորիչ հրահանգ է հաւատացեալներուն համար

Ո՛չ: Պահեցողութիւնը պարտաւորիչ հրահանգ մը չէ, այլ՝ յանձնարարելի կանոն: Պահեցողութիւնը պէտք է ըլլայ ինքնաբերական նուիրում մը, կամաւոր գոհողութիւն մը ենթակային կողմէ՝ առ Աստուած:

Եկեղեցին պահէի օրեր հաստատած է ժողովուրդը ուղղելու, չափաւորութեան եւ ժուժկալութեան վարժեցնելով՝ Աստուծոյ մօտեցնելու համար: Պահէր, թէեւ պարտաւորիչ չէ սկզբունքով, սակայն եկեղեցոյ վերին իշխանութիւնը հարկ եղած պարագային իր ժողովուրդը որկրամոլութեան ախտէն եւ կերուխումներուն յառաջացուցած մեղքերէն ձերբազատելու համար՝ իրաւասութիւն ունի պահէի օրեր հաստատելու եւ անոնց գործադրութիւնը հետապնդելու: Այդպիսի պարագաներուն, հաւատացեալ ժողովուրդին պարտականութիւնն է հնազանդի իր առաջնորդներուն եւ կատարել անոնց թելադրանքները յօժարակամ սրտով:

Պահէի համար սահմանուած են շաբթուան երկու օրերը՝ Զորեհշաբթի եւ Ուրբաթ: Զորեհշաբթին յիշել կու տայ Քրիստոսի մատնութիւնը, իսկ Ուրբաթ օրը՝ յիշատակութիւնն է Քրիստոսի չարչարանքներուն:

Հ Ո Ք Ե Ւ ՈՐ Պ Ա Տ Գ Ա Ս

Ի՞ՆՉ ԿԸ ՆԱՍԿԱՆՔ «ՇՆՈՐԸՆՈՎ ՓՐԿՈՒԹԻՒՆ» ԸՍԵԼՈՎ

«Շնորհքով փրկութիւն» ըսելով կը հասկնանք այն, որ Քրիստոս փրկութիւն շնորհեց մեզի առանց որեւէ պայմանի: Աշխարհ միշտ պայմաններով կը շարժի: Բանտարկեալներ պայմաններով ազատ կ'արձակուին: Մահապատիժներ պայմաններով կը վերցըին: Երբ մահապատիժի դատապարտուած մէկը ազատ արձակուի առանց որեւէ պայմանի՝ ասիկա ձրի շնորհք չի՞ նկատուիր իրեն համար: Անշուշտ: Երբ մեր գործած զարհուրելի մեղքերուն համար մահուան դատապարտուած էինք, Քրիստոս եկաւ եւ իր արիւնով շնորհեց մեզի յաւիտենական ազատութիւն առանց որեւէ պայմանի: Ան չըսաւ. «Կը ներեմ ձեզի՝ եթէ, կը ներեմ ձեզի՝ բայց»: Ան «եթէ»-ով ու «բայց»-ով չի խօսիր մեր հետ:

Խիստ պահեցողութիւնը եւ ժուժկալութեան առաքինութիւնը զօրաւոր են: Անոնք կը շղթայեն մարմինի բոլոր անդամները եւ զանոնք կը զրկեն բոլոր տեսակի անպատեհ ցանկութիւններէն ու անմաքուր մտածումներէն, միտքերէ հեռու կը վանեն դէտերու յարձակումները, որոնք կ'ուզեն պղտորել ու պղծել մաքրուածներուն սիրտերը, որովհետեւ, պահեցողութիւնը շղթայի մը նման ամուր կը դարձնէ եւ կը պահէ բարոյական բոլոր առաքինութիւններն ու հաւատքի զօրութիւնը:

(Յովհան Մանդակունի)

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ'ՈՒԶԵՍ...

ԵԹԷ Կ'ՈՒԶԵՍ ԱՍՏՈՒԾՈՅ ՓԱՆՔԸ ՃԱՆՉՆԱԿ ԱՍԵՂՃԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՄԷՋ, ԿԱՐԳԱ՝ ՍԱԳՄՈՍ 29

Հոչակեցէ՛ք, ո՛վ երկնային էակներ, Տիրոջ փառքն ու զօրութիւնը հոչակեցէ՛ք: Հոչակեցէ՛ք Տիրոջ փառաւոր անունը, երկրպագեցէ՛ք անոր՝ իր շքեղ սրբարանին մէջ:

Տիրոջ ձայնը ջուրերուն վրայ կը թնդայ: Մեր փառաւոր Աստուածը ինք կ'որոտայ, անոր ձայնը ծովերուն վրայ կը տիրէ: Տիրոջ ձայնը ահաւոր է եւ մեծափառ: Անոր ձայնէն կը կոտորտին ծառերը, կը կոտորտին մինչեւ իսկ Լիբանանի մայրիները: Անոր ձայնէն Լիբանանի լեռները հորթերու պէս կը ցատկոտեն, Հերմոն լեռը կը ցատկոտէ վայրի ցուլի ձագին պէս:

Տիրոջ ձայնէն փայլակ ու շանթ կը ցայտէ: Անոր ձայնէն անապատն իսկ կը դողայ, նոյնիսկ Կադէշի անապատը կը սարսի: Տիրոջ ձայնէն կաղնիները կը սարսին, եւ անտառի տերեւները կը թափին, իսկ անոր տաճարին մէջ ամէն ինչ անոր փառքը կը պատմէ: Տէ՛րն է, որ կ'իշխէ ովկիանոսերուն վրայ, իր գահին բազմած՝ իբրեւ թագաւոր յաւիտեան: Տէրը զօրութիւն պիտի ըլլայ իր ժողովուրդին, եւ օրինէ զայն՝ խաղաղութիւն պարգեւելով:

ՄԻՇՏ ՍԱԳՄՈՍ ԿԱՐԳԱՆՔ

ԱՌԱԿ 2.5-6

Իմաստութիւն ստացիր եւ մտքով զարգացիր: Մի՛ մոռնար եւ մի՛ արհամարհէր պատգամներս, Մի՛ շեղիր իմ խօսքերէս, մի՛ լքեր իմաստութիւնը, ան պիտի պաշտպանէ քեզ: Մի՛րէ զայն եւ ան պիտի պահէ քեզ: